

ԲԱԳԻԻ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԱՒԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի ԱԳՈՒ, 2 րեքշաբթի 9—22 փետր. 1905.

Բազում պայթեց հայկական կոտորած մահա-
գականների կողմից, և այդ կոտորածը նորնքան դա-
նադէտ էր, որքան անսպասելի: Քաղաքումն անցեալ
ամիս տեղի ունեցած բանւորական գործադուլներն ու
ցոյցերը ապացոյց եղան այն բունն տտելութեան, որ
տաճում է սեղիս ժողովուրդը դէպի ցարական ը-
ժիւր: Այդ տտելութիւնը ոչ պակաս զօրութեամբ
կրում է ամբողջ հասարակութիւնը, և սեղիս պար-
սիկ տարրն իսկ բն ա զ զ ու լ ո լ ը նկաւ նոյն
հոսանքի մէջ և առաջացրեց պրօպագանդիստներ, ու-
րոնք սկսան կազմել բանւորական խմբեր նոյն իսկ պար-
սիկներից: Յայտնի է այն մեծ դերը, որ ունեն տե-
ղիս բանւորական շարժումներում հայ բանւորները,
այն մեծ ոյժը որ նրանք ներկայացնում են կազմա-
կերպած գրութեան մէջ, որպէս և նրանց մեծաթիւ
լինելը: Բազւի գործադուլն ու ցոյցերն արձագանգ
գտնելով Պեակերուրգում, և ապա վերջինիս նշանա-
ւոր դէպքերից յետոյ առաջացած բանւորական յեղա-
փոխական շարժումներն ամբողջ Ռուսաստանում, ան-
շուշտ աւելի ևս բացեցին Բազւի հայ, որպէս և այլ
բանւորների աչքը, և նկատելի եղան դրանց մէջ զօ-
րեղ պատրաստութիւններ մօտ ապագայում պատա-
հելիք շարժումների նկատմամբ: Տեղիս իշխանութիւնն
այդ նկատեց — և այդ ժամից նրա ջանքը եղաւ
ամեն միջոց գործ գնել բանւորական շարժումների ա-
ռաջն առնել: Դրա համար առաջին հարածը պէտք
է արւէր հ ա յ բանւորներին, որոնց մասնուոր կա-
րեւորութեան վրայ մատնանշեցի վերէ: Եւ ահա տե-
ղի են ունենում Բազւի իշխանութիւնների կողմից զը-
ժօխային մեքենայութիւններ, որոնց նպատակն էր զըր-
գըռել, թշնամացնել և արիւնահեղ ընդհարում ըս-
տեղծել կոյր մահաբազանների կողմից հայ-գեա-
վուրների դէմ: Եւ առաջինները, մոռացած այն, որ
հայերի հետ միասին գտնուում են միեւնոյն ընդհա-
նուր եղբայրական ձեռնառկութի տակ, միեւնոյն քաղա-
քական ստրկութեան շղթաներում, միեւնոյն տնտեսա-
կան շահագործման արքաններում, միեւնոյն կու-
րօքէն, մասամբ անձնատուր լինելով իրանց կուսակեր-
բութեան, դառնում են խիստ գործիք տեղիս ա-
նամօթ ու ոճրագործ սուս կառավարութեան ձեռքը
որը թունաւորում և զէնք է դարձնում նրանց հա-
յերի դէմ:

Պատմենք դէպքերը:
Ամիս 7-ին առաւօտը սոփորականի նման ամեն
մարդ գնում էր իր գործին, փողոցներում անցուղար-
ձը կատարում էր ինչպէս միշտ, երբ նկատելի եղաւ
ինչ-որ անհասկանալի պատճառով Բազւրնայա փողո-
ղացում շրջում են մեծ թւով ոստիկաններ և զին-
ւած կողակներ: Այդ փողոցում մասվաճառներն ու
մանրավաճառները գլխաւորապէս պարսիկներ են: Ժամ
ինն անցած յանկարծ կայծակի սրագութեամբ լուր է
պատում, թէ վերոյիշած փողոցում մահաբազաննե-
րը կոտորում են հայերին: Քաղաքն ամբողջ ցընց-
ում է . . . Նոյն իսկ ոստիկանների ու կողակնե-

րի քթի տակ, որոնք մնում են անխուզ հանդիսա-
տեսներ, պարսիկները խմբերով կամ շտաճ կառքե-
րում ցրւում են աջ ու ձախ Բազւրնայա փողոցում
ու շրջակայքը և զէնքերից գնդակահարում ամեն հայի
նոյն փողոցում, նախկին քաղաքային տան կտուրի վը-
րայ խոնուում է զինւած պարսիկների հոճ բազմու-
թիւն, որ շարունակ և անարգել կերպով կրակ են
թափում հայերի վրայ: Այդտեղից սկսւում է կո-
տորածը, որ արագաբար ծաւալւում է ամբողջ քա-
ղաքի վրայ: Ժամ 11-ից սկսած անհամար և ան-
ընդհատ հրացանաձգութիւնը կոտորած է սփռում քա-
ղաքի ամեն անկիւնում, ուր փողոց չէ մնում, ուր
արիւնը չէ հոսէր: Նամակս գրելով զեւ ընդհանուր
շփոթութեան մէջ զանց եմ առնում առաջ բերել
մանրամասն ցուցմունքներ և նկարագրութիւններ դէպ-
քերի նկատմամբ, որոնք իբրև խժոժութիւններ, գա-
զանութիւններ այնքան սարսափելի են որքան աղէ-
խարշ և որքան անպատմելի . . . Եւ մինչդեռ կո-
տորածը շարունակւում էր, յանկարծ կանգ է առնում
ամբողջ կիսնը. ամենքը վազող վազողի ետեւից փակ-
ւում են իրանց աներում, խանութներում, փակւում
են բոլոր պաշտօնատները, կանգ է առնում ձիաքար-
ջը . . . Եւսկ փողոցներում պարսիկները խողխողում
են որսած հայերին . . . և կոտորածը տարածւում
է մինչև Բազւիստանի, Բիրի-Շէյրթի և այլ արւար-
ձաններ . . . մինչդեռ միաժամանակ, սկսած առա-
ւօտանից, զինւած մահաբազաններ արարձաններից
անընդհատ խուժում են դէպի քաղաք. շատերը ըս-
տած անթամբ ձիերի վրայ . . . Տների, խանութ-
ների վրայ յարձակել, հրդեհ, թալան, կողոպուտ, և
արիւն, արիւն, արիւն ամեն կողմ . . . մինչև երեկոյ,
մինչև կէս գիշեր . . . Չենք յանդգնում և մեր ձեռ-
քը զողում է գրելու համար այդ օրը կոտորւած հա-
յերի թիւը, որ ստուգած չէ, բայց որ հաշււում է
հաբիւրներով . . .

Այդպէս աւարտ ստացաւ այդ սոսկալի օրը . . .
Յանկարծակի բռնւած հայերն այդ օրն ան-
կարող էին — և հնար էլ չկար — մտածել կազ-
մ ա կ եր պ ա ծ ի ն ք ն ա պ ա շ տ պ ա ն ու լ -
թ ե ա ն մասին: Բայց զիշերն այդ պատրաստութիւն-
ները տեսնեցան երկու հայ յեղափոխական կուսակ-
ցութիւնների կողմից, այն է շնչակեան և Գաշնակ-
ցական, որոնք միասին խորհուրդ կազմելով և որոշե-
լով միասին ելնել փողոց իրանց զինւած խմբերով:
Երեքշաբթի առաւօտեան էլ, արգարե, այդ խմբերն
անցան փողոց: Մեծ է լինում անամօթ ոստիկանու-
թեան և սեղական այլ իշխանութիւնների հիասթա-
փումը. երբ տեսնելով այդ խմբերին, երկիւղի մէջ են
ընկնում, որ իրանց զժոխային պլանը կարող չը լի-
նեն նախորդ օրւայ պէս անարգել շարունակել գոր-
ծադրել: Եւ ինչ, ոստիկաններ ու կառավարութեան
այլ ազէնտներ սկսւում են բացարձակաբար փամփուշտ-
ներ ցրել մահաբազաններին, իրախոսել իսկ զը-
րանց և կողակների մեծ վաշտով կանգնել պարսիկ
խուժարի հետ միեւնոյն շարքում . . . իբրև թէ հա-
յերն յապատմել են և պէտք կայ դրանց «ճըն-
չել» և խաղաղութիւնը վերականգնել . . . Բայց մինչ
այդ մեր քաջ յեղափոխական խմբերը ձեռնածալ չէ-
ին մնում: Նախ ստիկանութիւն ապա զնալով նրանք
սեղի և սեղի են ստորանում և ապա մի քանի
ուժգին յարձակումներից յետոյ աջողում են տիրանալ
քաղաքի կենտրոնին — պ ա ր ա պ ե տ ի ն ու սրա շըր-

ջակայքին: Այստեղ պայթում է սոսկալի ընդհարում մի կողմից հայ յեղափոխականների և միւս կողմից պարսիկների միջև՝ այս վերջիններին միացած լինելով կողակները . . . երկու կողմից հարկւրաւոր զոհեր և փողոցներն ամբողջովին ներկուժ են արւելում . . . Իսկ կառավարութեան ազգանները շարունակում են փաժփոշաներ բաժանել պարսիկներին . . . որոնցից իրեր հոգի, հ ա գ ա ծ ո ու ս զ ի ն լ ո Ր ի զ գ ե ս տ, կրում էին քսակներ, լ ի փ ա մ փ ու շ տ ն եր ու վ: Երբ սրանք անցնում են եղել Գուբէրնալայա փողոցով, գնդակի մի հարած գլորում է այդ երկբից մէկին և զինւորի վերսրկուի նակից զուրս է պրծնում . . . մի Ս ա բ ու Ն չ ե ց ի պ ա ր ս ի կ — անժխտելի ապացոյց կառավարութեան և ստորաքարշ և ոճրագործ նահանգապետ Նակաշիձէի դիւային գործակցութեան և կոտորածների գործի հեղինակ լինելուն . . .

Այդ բերկոյեան մութը կոխած էր քաղաքն աւելի լայն շրջանով մերոնց պաշտպանութեան տակ էր արդէն . . . Պարսիկներն այդ տեսնելով անցան կենտրոններից դուրս, այդտեղ սկսեցին իրանց կոտորածն ու աւերումը: Թաթարական կողպուտ, ընտանիքներ սըրախողխող անել, հրդեհել մի քանի յայտնի տներ և այլ գաղանթութիւններ տեւում են ժամերով: Հըրդեհած տներից մէկում պահէլ էին մօտ հարիւր հոգի . . . Հրդեհաշէջներ, բնական քաւր, չը կային, և մինչդեռ տան ներսը այրում էին մարդիկ, ամեն մէկը, որ յանգգում էր կրակից ազատւել և դուրս փախչել փողոց անմիջապէս գնդակահարում էր կողակների և պարսիկների ձեռքով . . . Վերջապէս յեղափոխական խմբերը քաջարի կերպով հասան այդտեղ և կոխ մղելով՝ գետին փոսցին տասնեակներով պարսիկ ու կողակ, բայց, աւա՛ղ, ոչ մի հնարքով չը կարողացան հրդեհից ազատել ոչ որին . . .

Քաղաքի կենտրոնից հեռու փողոցները սասնաւորապէս մէկ առանձին վտանգի մէջ էին: Գիւղից խուժած վայրերի թաթարները հարց ու փորձ էին անում թէ ո՞ր տան մէջ հայ կայ և մասնանիչ եղած տունը ենթարկում էր գնդակահարութեան և աւերման: Այդ օրը — կոտորածի երկրորդ օրը — ամբողջ գիշերը՝ լոյս չորեքշաբթի՝ քաղաքն, ասեա թշնամի զօրքերով լքցւած, գնդակների տարափի տակ լուսացրեց . . . Չորեքշաբթի ամեն բան կերպարանքը փոխեց: Այդ օրը յեղափոխական խմբերը շատ ուժեղ և աղբու էին . . . և տեղական ոճրագործ իշխանութիւնն իսկոյն կռահեց, որ այլ ևս անկարելի կը լինի անպատիժ կերպով շարունակել կոտորածը: Այդ առաւօտ մինչև կէսօր յեղափոխական խմբերը զօրեղ զիմադրութիւն ցոյց տին պարսիկներին ու զօրքերին, քաջութեամբ պաշտպան եղան հայերին . . . և այդ տեսնելով՝ նահանգապետը սարսափած՝ կէսօրին հրուէր կարգաց հայ և մահմետական հոգևորականութեան խաղաղեցնել իրանց ժողովուրդներին . . . Սըրիկայ ոճրագործ նահանգապետն ամբողջ երկու օր կոտորածների միջոցին պահէլ էր ինչ-որ թաքուն ծակ որտեղից վարում էր կոտորածների գործը, իսկ այժմ, երբ օրը կէսօրին, երբ հայ յեղափոխականները սարսափեցրին իրան, յանկարծ աղէտաբար առաջ է գալիս և յխաղաղութիւն՝ քարոզում . . . Այսպէս կամ այնպէս, աղբու լիով հասարակութեան ակամաւոր և թիֆլիսից եկած հրահանգներից՝ մահմետական հոգևորականութիւնը միջամտում է և հայ հոգևորականութեան հետ միախառնւելով, մոնետիկների միջոցով կուսած 10-15 հազար հայ և

պարսիկ խառն բազմութեան դուրս անցած թափօր են կազմում և սկսում հանդիսւոր կերպով շրջել քաղաքի փողոցներով: Խորախ ոճրագործ նահանգապետն էլ լրբութիւն է ունենում ինքն խառնել հոգևորականութեան հետ, զինւորական երաժշտական խումբ և զինւորներ կոչել և իբրև թէ յխաղաղութիւն սիրող՝ սիրամարգի փետուրներով ձեմել այն հայ ու պարսիկ ժողովուրդի առաջ, որոնց նա միմեանց հետ թշնամացրեց, որոնց ձեռքով նա առաւ արւել հոսեցրեց, նպասակ ունենալով հայերին կոտորել տալ և դրա հետ միասին թուլացնել անդամալուծել հէնց նայն պարսիկներին և սրանց ու հայերի մէջ շարունակական թշնամութեան որովք սերմանելով, չէ զոքացնել ու մեռցնել դրանց զիմադրական ոյժը մարդասպան ցարի և դրա ատելի բէժիմի դէմ:

Խառն թափօրը սակայն տեղի ունեցաւ խիստ հանդիսաւոր կերպով՝ երկու ժողովուրդի կողմից արձակած խլացուցիչ ու ռաւան երօվ: Գառն, կսկծալի, բայց և սրտաշարժ տեսարան էր ներկայացնում այդ թափօրը: Ահա երկու ժողովուրդ, երկուսն էլ թշուառ, սարուկ, երկուսն էլ միւսնոյն ծակատարի և միւսնոյն օրէնքի տակ խեղդւած, երկուսն էլ պատրաստ ապրել միմեանց հետ հաշտ ու եղբայրաբար, երկուսն էլ կուսած կործանելու ցարիղ մի սպանիչ բէժիմը, — ինչ. թշնամանում են միմեանց դէմ խարդախ մեքենայութիւնների շնորհով և մէկը կոտորում է միւսին . . . Բայց նրանք կուսած են իրար սիրելու և իրար հետ եղբայրանալու, և այդ բնական զգացման ապացոյց եղաւ այն, որ թափօրի միջոցին հայն ու պարսիկն էլ չէին գողարում միմեանց համբուրել և միախառնել ուրախութեան արտասուքներ, գրկախառն կերպով իրար շնորհաւորելով, որ իրանց մէջ կայացաւ այլ ևս հաշտութիւն: Ամեն ձայն այժմ պոռում էր կատաղած, որ երկու եղբայր ազգերը զոհ են գնացել ամենախարդախ կերպով իրանց ընդհանուր ատելի թշնամու մեքենայութիւններին: Մարդ յուզում էր, երբ ձեզ անծանօթ պարսիկ գալիս համբուրում է կատաղած ու միանգամայն սխուր շեշտով ասում է. — «Ալլահ բալա վէլսն բըզա դուշման էլլանա!» (Աստուած պատժէ մեզ թշնամացնողին):

Հինգշաբթի, 10-23 Փետր.

Տեղիս պրօկուրօրը միայն այսօր է հեռագրել Պետերբուրգ դէպքերի և իրերի գրութեան մասին: Արվիկա սի կառ վարչապետի տեղապահ գեներալ Մալաժա տեղո հասաւ: Այսօր, հինգշաբթի, առաւօտեան արթնացանք նորից ընդհանուր երկեղի և պանիկայի մէջ . . . Ատերեոյթս սակայն ոչ մէկ առիթ չը կայ այդպիսի արտասուքի համար: Արտորածի կրկնութեան դեռ նախագուշակներ չեն երևում և սակայն հայ հասարակութիւնը փախչում է քաղաքից երկաթուղիներով դէպի թիֆլիս և այլ կողմեր: Անշուշտ վստահ չը լինելով վրէժան մասին և օգտուել ուղեւորով ներկայ յխաղաղութիւնից, հայերը շտապում են ազատւել այն քաղաքից, որ իրանց համար այլ ևս անիծես է:

Յեղափոխական խմբերը շարունակում են լինել սրթուն և հսկող:

ՄՈԳ.